ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 07.08.2018թ. ԹԻՎ 698-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 20 օգոստոսի 2018թ.,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Աբգարյան ԳԿՎ պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Գրիգորյան Տրանսպորտի բաժնի պետ
Հ. Մխիթարյան Տրանսպորտի բաժնի-մեխանիկ վարորդ
Ա. Աղվանյան Տրանսպորտի բաժնի դիսպետչեր
Ա. Մարտիրոսյան Տրանսպորտի բաժնի մեխանիկ-վարորդ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ մասնագետ

Օրակարգ՝

1. <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով դիզելային վառելիքի գնման ընթացակարգի հայտերի բացում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային աճուրդի միջոցով էլեկտրոնային գնումների Armeps (www.eauction.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի համար սահմանված նախահաշվային գինը:

Հ/Բ	Գնման առարկան	Նախահաշվային գինը՝ ՀՀ դրամ
1	Դիզելային վառելիք	2350000

Արձանագրվեց, որ <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել <<ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ն և <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն:

Այնուհետև հանձնաժողովի նախագահը հրապարակեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ առանց ԱԱՀ.

Հ/Բ	**Գնման առարկան**	**<<ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ ներկայացրած գինը՝ ՀՀ դրամ**	**<<ՖԼԵՇ>> ՍՊԸ ներկայացրած գինը՝ ՀՀ դրամ**
1	Դիզելային վառելիք,	1791666.67	1895833.34

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Այնուհետև հանձնաժողովը քննարկման արդյունքում միաձայն որոշեց.

1. <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն >> ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ին,

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումը,

3. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգի՝ հրավերի 4-րդ հավելվածում սահմանված. <<Մասնակիցը պետք է ունենա <<Զվարթնոց>> և <<Շիրակ>> օդանավակայաններից առավելագույնը 10կմ հեռավորությամբ Կայանների սեփականության վկայականի և/կամ կնքվելիք պայմանագրի գործողության ժամանակաշրջանում գործող վարձակալության պայմանագրի պատճենները>>:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան, <<ՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-1/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.16 կետով սահմանված ժամկետի ավարտը;

Ա. Աբգարյան Հանձնաժողովի նախագահ

Ա. Գրիգորյան Հանձնաժողովի անդամ

Հ. Մխիթարյան Հանձնաժողովի անդամ

Ա. Աղվանյան Հանձնաժողովի անդամ

Ա. Մարտիրոսյան Հանձնաժողովի անդամ

Գ. Սարգսյան Հանձնաժողովի քարտուղար